ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» 05 2022թ. N 30-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N1363-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՎՈՎ 300 ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ 500 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ պարբերությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսված թվով 300 դպրոցների և 500 մանկապարտեզների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքների հիմնական բնութագրերը՝ համաձայն հավելվածի:

2. Նախագծային և շինարարական աշխատանքների պատվիրատուներին՝ ՀՀ պետական և համայնքային բյուջեների միջոցների (այդ թվում սուբվենցիաների, վարկերի, օրենքով չարգելված այլ միջոցների) հաշվին թվով 300 դպրոցների և 500 մանկապարտեզների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքների տեխնիկական առաջադրանքների և նախագծային փաստաթղթերի մշակման, ինչպես նաև շինարարական աշխատանքների կատարման ընթացքում ղեկավարվել սույն հրամանի 1-ին կետով սահմանված շինարարական աշխատանքների հիմնական բնութագրերով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Invalid signature

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Հավելված

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

2022 թվականի մայիսի 25-ի N 30-Լ հրամանի

ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N1363-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՎՈՎ 300 ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ 500 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԿԱՌՈՒՑՈՒՄ՝ Նոր շենքերի և շինությունների, մասնաշենքերի, առանձին կառույցների, դրանց առանձին տարրերի իրականացում:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ՝ շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր, ուղղված՝ գոյություն ունեցող շենքի կամ կառուցվածքի, դրա առանձին մասերի նոր գործառնական նշանակությամբ օգտագործմանը և/կամ հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխմանը, շենքի կամ կառուցվածքի հուսալիության ապահովմանն ու արդիականացմանը:

Վերակառուցման աշխատանքները կարող են իրենց մեջ ներառել՝ շինարարական օբյեկտի առանձին մասերի հարաչափերի փոփոխություն, այդ թվում օբյեկտի բարձրության, հարկայնության, մակերեսի, ծավալի ընդլայնման, կցակառույցի, վերնակառույցի իրականացման միջոցով, կրող կոնստրուկցիաների փոխարինում կամ վերականգնում, կոնստրուկտիվ համակարգի փոխարինում՝ ավելի սեյսմակայուն (երկրաշարժադիմացկուն) համակարգերով:

Վերակառուցումը իրականացվում է միջամտության երեք մակարդակներով. վերականգնում, սեյսմազինվածության բարձրացում և ուժեղացում:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ՝ գոյություն ունեցող շենքերում և շինություններում իրականացվող շինարարական աշխատանքների համալիր, որն իր մեջ ներառում է ֆիզիկատեխնիկական, ճարտարապետագեղարվեստական, պատմական և գործառնական նշանակության վերականգնմանն ուղղված միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում առանձին կոնստրուկտիվ տարրերի և ինժեներական հաղորդակցուղիների ու սարքավորումների փոխարինում, ինչպես նաև շահագործողական ցուցանիշների բարելավում:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ, ՆՈՐՈԳՈՒՄ՝ գոյություն ունեցող շենքերում և շինություններում իրականացվող տեխնիկական միջոցառումների համալիր, որն ուղղված է շենքերի տարրերի և ինժեներական սարքավորումների վաղօրոք մաշվածությունը կանոնավոր և ժամանակին կանխելուն, փոքր վնասվածքներն ու անսարքությունները վերացնելուն՝ կանխարգելիչ միջոցառումների կատարման միջոցով: Նորոգման աշխատանքներն իրականացվում են շենքի կոնստրուկցիաների և ինժեներական սարքերի աշխատունակությունը վերականգնելու, ինչպես նաև շենքի շահագործողական ցուցանիշներն (տեխնիկական, սանիտարահիգիենիկ, տնտեսական և էսթետիկ բնութագրերը) ապահովելու համար: